

ՀՀ ԻՐԱՎԱԲԱՆՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ
ԵՊՀ ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔ

Թիվ 2 (87)

2020 թ.

Գլխավոր խմբագիր՝
ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս,
ի.գ.դ., պրոֆ. Գագիկ Ղազինյան

Խ մ ք ա գ ր ա կ ա ն խ ո ղ Ի ո լ ր ղ

Սամվել Դիլբանդյան - ի.գ.դ.

գլխավոր խմբագրի տեղակալ

Կարեն Գևորգյան - ի.գ.թ

գլխավոր խմբագրի տեղակալ

Աշոտ Պետրոսյան -

պատասխանատու քարտուղար

Գևորգ Դանիելյան - ի.գ.դ.

Նիկոլայ Ստոյկո – ի.գ.դ.

Հարություն Խաչիկյան - ի.գ.դ.

Արմեն Հայկյանց - ի.գ.դ.

Ղավիթ Ավետիսյան - ի.գ.թ.

Արթուր Վաղարշյան - ի.գ.դ.

Սերգեյ Առաքելյան - ի.գ.դ.

Վահե Հովհաննիսյան - ի.գ.դ.

Տարոն Սիմոնյան - ի.գ.թ.

Հիմնադիր և հրատարակիչ՝
ՀՀ իրավաբանների միություն,
ԵՊՀ իրավագիտության
ֆակուլտետ

Խմբագրության հասցեն՝

ՀՀ, 0025 Երևան,

Ալեք Մանուկյան 1, ԵՊՀ

իրավագիտության ֆակուլտետ:

Հեռ. 060-71-02-47

Էլ. կայք՝

[http://ysu.am/faculties/hy/Law/
section/structure/amb](http://ysu.am/faculties/hy/Law/section/structure/amb)

Խմբագրությունը կարող է

հրապարակել նյութեր՝ համամիտ

չլինելով հեղինակների

տեսակետների:

12 համակարգչային էջից ավելի

չպատվիրված նյութերը չեն

ընդունվում:

e-mail: a_petrosyan@ysu.am

Դասիչ՝ 77771

Տպագրական 13.5 մամուլ

Գրանցման թիվը՝ 798

Տպաքանակը՝ 500

Գինը՝ պայմանագրային

Հանձնված է շարվածքի

24.08.2020

Հանձնված է տպագրության

29.10.2020

С О Ю З Ю Р И С Т О В Р А
Ю Р И Д И Ч Е С К И Й Ф А К У Л Ъ Т Е Т Е Г У

ГОСУДАРСТВО И ПРАВО

Номер 2 (87)
2020 г.

Главный редактор:
академик НАН РА,
д.ю.н., проф. Гагик Казинян

Учредитель и издатель:
Союз Юристов РА,
Юридический факультет ЕГУ

Р е д а к ц и о н н ы й с о в е т

Самвел Дилбандян - д.ю.н.

зам. главного редактора

Карен Геворгян - к.ю.н.

зам. главного редактора

Ашот Петросян -

ответственный секретарь

Геворг Даниелян - д.ю.н.

Арутюн Хачикян - д.ю.н.

Николай Стойко – д.ю.н.

Армен Айкянц - д.ю.н.

Давид Аветисян - к.ю.н.

Артур Вагаршян - д.ю.н.

Сергей Аракелян - д.ю.н.

Ваге Оганнесян - д.ю.н.

Тарон Симонян - к.ю.н.

Адрес редакции:
РА, 0025 Ереван,
ул. Алека Манукяна 1,
юридический факультет ЕГУ.
Тел.: 060-71-02-47
e-mail: a_petrosyan@ysu.am
web: [http://ysu.am/faculties/hy/Law/
section/structure/amb](http://ysu.am/faculties/hy/Law/section/structure/amb)

13.5 усл. печ. л.
Тираж: 500
Сдано в набор 24.08.2020
Подписано к печати 29.10.2020

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Վարդան Պողոսյան, Նորա Սարգսյան

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ԱՆՄԻՋԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՈՐՄԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԱՍՏԻՃԱՆԱԿԱՐԳՈՒԹՅՈՒՆԸ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ (ՄԱՍ 2)..... 4

Քրիստինե Գաբուզյան

ՀԱՅՑԱՅԻՆ ՎԱՂԵՄՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԻ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆԸ ՆԵԳԱՏՈՐ ԵՎ ՎԻՆԴԻԿԱՑԻՈՆ ՀԱՅՑԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ 19

Արթուր Վարդանյան

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԿՈՈՊԵՐԱՏԻՎՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ..... 32

Աշխեն Սողոմոնյան

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՄԱԿՈՐ ԼՈՒԾԱՐՄԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԻՄՔԵՐԸ..... 41

Լիլիթ Պետրոսյան

«EX OFFICIO» ՍԿԶԲՈՒՆՔԻ ԻՐԱՑՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՎԵՐԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՓՈՒԼՈՒՄ..... 48

Գևորգ Իսրայելյան

ՊՈՐՆԿՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԻ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՄԱՆ ՈՐՈՇ ՀԱՐՑԵՐ 57

Հարություն Խաչիկյան

ԱՆՉԱՓՈՎՈՒՄ ԴԱՏԱՊԱՐՏՅԱԼՆԵՐ. ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԱՍՊԵԿՏ 63

Էմիլյա Աբրահամյան

ՊԱՏԺԻ ՆՇԱՆԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ՀԻՄՆԱՆՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ..... 71

Վարազդատ Սուքիասյան

ԳԱՂՏՆԻՔԸ ՈՐՊԵՍ ՍՈՑԻԱԼ-ԻՐԱՎԱԿԱՆ ԵՐԵՎՈՒՅԹ..... 81

Տաթևիկ Գևորգյան

ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԲԱՂԿԱՑԱԿԱՆ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՐԱԿՈՒՄԸ 91

Արսեն Մարտիրոսյան

ՎԵՐԱԴԱՍ ԴԱՏԱԽԱՋԻ ԿՈՂՄԻՑ ՀՍԿՈՂ ԴԱՏԱԽԱՋԻ ՑՈՒՑՈՒՄՆԵՐԻ «ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ» ԴԵՄ ՔՆՆԻՉԻ ՆԵՐԿԱՅԱՑՐԱԾ ԱՌԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՈՐՈՇ ՔՐԵԱԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐ 95

Արտակ Հովհաննիսյան

ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄԸ ՈՐՊԵՍ ՕՊԵՐԱՏԻՎ-ՀԵՏԱԽՈՒՋԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐ 102

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ԱՆՄԻՋԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՈՐՄԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԱՍՏԻՃԱՆԱԿԱՐԳՈՒԹՅՈՒՆԸ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ (ՄԱՍ 2)¹

Վարդան Պողոսյան

2013-2015 թթ. Սահմանադրական բարեփոխումների
մասնագիտական հանձնաժողովի անդամ

Նորա Սարգսյան

ԵՊՀ եվրոպական և միջազգային իրավունքի ամբիոնի դոցենտ,
իրավաբանական գիտությունների թեկնածու

Հիմնական իրավունքների անմիջական գործողությունը սահմանադրության գերակայության համատեքստում

Հիմնական իրավունքների անմիջական գործողության էությունը բացահայտելու համար անհրաժեշտ է նախ պարզել, թե ինչ է իրավունքի և Սահմանադրության գործողությունն ընդհանրապես:

Ըստ Վ. Ներսեսյանցի՝ իրավունքի գործողությունը դրա իրավաբանական ուժի դրսևորման բոլոր ձևերի համակցությունն է: Իրավունքի իրավաբանական ուժ ասելով հասկացվում է թե՛ բուն իրավական նորմերի և թե՛ իրավական ակտերի համապարտադրականությունը²: Սահմանադրության գործողությունը սահմանադրության բոլոր հատկանիշների և որակների դրսևորումն է, որը արտահայտում է սոցիալական սուբյեկտների վարքագծի վրա ներգործելու նրա ունակությունը: Սահմանադրության գործողությունը ենթադրում է սահմանադրության նորմերի իրագործման իրավաբանական հնարավորություն, հասարակական հարաբերությունների վրա փաստացի ներգործելու ունակություն³: Սահմանադրության իրագործումը սկսվում է այն ժամանակ, երբ Սահմանադրության նորմի հասցեատերերը փաստացի ցուցաբերում են Սահմանադրությամբ սահմանված վարքագիծը: Խորհրդային և հետխորհրդային երկրների իրավունքի տեսության մեջ առանձնացվում են իրավական նորմերի իրագործման⁴ չորս հիմնական ձևեր՝ *պահպանում*, *կատարում*, *օգտագործում* և *կիրառում*: Սակայն այս տարանջատումը սահմանադրական նորմերի պարագայում դիտվում է խիստ պայմանական⁵:

¹ Հոդվածի 1-ին մասը լույս է տեսել «Պետություն և իրավունք» հանդեսի նախորդ համարում:

² Տե՛ս Վ. Ներսեսյանց, Իրավունքի և պետության տեսություն, Եր., 2001, էջ 238:

³ Տե՛ս В. Лущин, Конституция Российской Федерации. Проблемы реализации, М., 2002, էջ 62:

⁴ Ըստ Վ. Ներսեսյանցի՝ իրավունքի նորմերի իրագործումն իրավունքի սուբյեկտների վարքագծի համապատասխան ձևերի միջոցով դրանց պահանջների իրականացումն է (Տե՛ս Վ. Ներսեսյանց, նշվ. աշխ., էջ 244): Ըստ Ս. Ալեքսեևի և Վ. Խրոպանյուկի՝ իրավունքի նորմերի իրագործումն իրավունքի կյանքի կոչումն է, սուբյեկտների փաստացի վարքագծի մեջ իրավական նորմերի բովանդակության մարմնավորումը (Տե՛ս С.С. Алексеев, Собрание сочинений в 10 томах, том 8, М., 2010, էջ 221, Վ. Խրոպանյուկ, Պետության և իրավունքի տեսություն, Եր., 1997, էջ 306):

⁵ Տե՛ս Б. Эбзеев, Введение в Конституцию России, М., 2015, էջ 144:

Խնդրո առարկայի շրջանակներում մեզ համար հետաքրքրություն է ներկայացնում նշված ձևերից վերջինը՝ կիրառումը, որը սահմանադրական նորմերի կենսագործման առավել նշանակալից ձևերից է¹: Խորհրդային և հետխորհրդային երկրների իրավունքի տեսության մեջ այն բնութագրվում է որպես կոնկրետ իրավական հարցի լուծմանն ուղղված իշխանական անհատական-իրավական գործունեություն, որի արդյունքում կայացվում է անհատական ակտ²: Այլ կերպ ասած՝ կիրառումը իրավական նորմի անհատականացումն է կյանքի կոնկրետ իրավիճակում, կոնկրետ սուբյեկտի նկատմամբ դրա համար լիազորված սուբյեկտների կողմից և սահմանված ընթացակարգերի պահպանմամբ: Իրավունքի կիրառումը պետության և պետական մարմինների բացառիկ իրավասությունն է, որը ենթադրում է իշխանական միջամտություն Սահմանադրության պահանջների իրացման համար³: Սահմանադրության կիրառումը նեղ իմաստով ենթադրում է հանրային իշխանության իրավասու մարմինների կողմից անհատական-կոնկրետ իրավակիրառ ակտերի ընդունում, ինչն առանձնապես կարևոր է հիմնական իրավունքների իրագործման տեսանկյունից:

Քանի որ Սահմանադրությունը առաջին հերթին նորմատիվ փաստաթուղթ է և ենթադրում է սահմանադրական իրավունքի նորմերի հասցեատերերի համար համապարտադիր վարքագիծ, ապա հարց է առաջանում, թե ինչու է ընդհանրապես անհրաժեշտ Սահմանադրության «գործողությունից» հատուկ տարբերակել սահմանադրական նորմերի «անմիջական գործողությունը»: Արդյո՞ք ցանկացած նորմատիվ իրավական ակտի նորմատիվությամբ պայմանավորված՝ դրա գործողությունը նույն կերպ չի դրսևորվում:

Ինչպես ցույց տվեց սահմանադրության նորմատիվության և գերակայության գաղափարների պատմական զարգացման ուսումնասիրությունը (մաս I), *հիմնական իրավունքների «անմիջական գործողությունը»* եզրույթի ներմուծումը Պերմանիայում սահմանադրական ավանդույթներով պայմանավորված պատմական արմատներ ուներ և իրականում նպատակ է ունեցել ընդգծելու այն հանգամանքը, որ հիմնական իրավունքների դրույթները անմիջականորեն պարտավորեցնում են պետական իշխանության բոլոր մարմիններին, հատկապես՝ օրենսդիրին, և որ դրանք անմիջականորեն, առանց օրենքի միջնորդավորման, սուբյեկտիվ իրավունքներ են ընձեռում քաղաքացիներին: Մինչդեռ ամբողջ սահմանադրության «անմիջական գործողությունը» այն իմաստով, որ Սահմանադրության բոլոր դրույթները կարող են առանց օրենքի միջնորդավորման ամբողջությամբ կիրառվել, գործնականում անհնարին է: Քանի որ հիմնական իրավունքներից դուրս Սահմանադրության գործողությունը չի տարբերվում իրավական նորմի սովորական գործողությունից, ուստի *«անմիջական գործողությունը»* եզրույթը նպատակահարմար է կիրառել բացառապես հիմնական իրավունքների պարագայում: Այս առումով բոլորովին էլ պատահական չէ, որ Հայաստանի Հանրապետության 2015 թ. խմբագրությամբ Սահմանադրությունը չի կրկնում նախկին Սահմանադրության 6-րդ հոդվածի 1-ին մասի այն դրույթը, որով սահմանված էր, որ սահմանադրության բոլոր նորմերը գործում են անմիջականորեն:

Սահմանադրության բոլոր դրույթները նախ և առաջ օբյեկտիվ իրավունքի դրույթներ են, ուստի առաջին հերթին պարտավորեցնում են դրանց հասցեատեր հանրային իշխանության մարմիններին: Սակայն հիմնական իրավունքների մասով դրանք միաժամանակ ստեղծում են *սուբյեկտիվ իրավունքներ*՝ անհատական պահանջների իմաստով: Այս մոտեցման հիմքում ընկած է մարդու բնական ազատությ-

¹ Տե՛ս Օ. Կուտաֆին, Предмет конституционного права, Избранные труды в 7 томах, Том 1, М., 2011, էջ 115:

² Տե՛ս Ս. Алексеев, Теория права, 2-е изд., М., 1995, էջ 254:

³ Տե՛ս Օ. Կուտաֆին, նշվ. աշխ., էջ 116:

յան գաղափարը, որի համատեքստում մարդու իրավունքները բնորոշվում են որպես «սահմանադրական իրավունքի միջոցով անհատի պոզիտիվացված իրավունքներ, որոնք ապահովում են նրա ազատությունը և հավասարությունը պետության հանդեպ»¹: Արդյունքում հիմնական իրավունքները պարզապես ծրագրային դրույթներ չեն, որոնք դեռ պետք է իրացվեն օրենսդրի կողմից, այլ դրանք ուղղակիորեն գործող, կիրառման և կատարման ենթակա իրավունքներ են՝ ուղղված իրավասու հանրային իշխանության մարմիններին: Եթե հիմնական իրավունքները չլինեին անմիջականորեն գործող իրավունք, ապա հնարավոր կլիներ մեկնաբանել այնպես, որ դրանք պարտավորեցնում են միայն հանրային իշխանություններին և այդ իրավունքների կրողների համար չեն առաջացնում սուբյեկտիվ իրավունքներ: Այս պարագայում, եթե հիմնական իրավունքների դրույթները չկոնկրետացվեին օրենքներում, հիմնական իրավունքների կրողները չէին կարողանա հանրային իշխանություններից պահանջել համապատասխան վարքագիծ:

Հիմնական իրավունքի նորմի անմիջական գործողությունը նշանակում է, որ նորմն ունակ է և ենթակա կիրառության՝ առանց օրենսդրի միջնորդավորման (*interpositio legislatoris*): Այլ կերպ ասած՝ սահմանադրական նորմի կիրառության համար նախապայման չէ դրա՝ օրենքով կոնկրետացման անհրաժեշտությունը: Սահմանադրությունը գործում է անկախ դրա նորմերը իրացնող, զարգացնող կամ մանրամասնեցնող նորմատիվ ակտերի գոյությունից կամ բացակայությունից²: Հիմնական իրավունքների անմիջական գործողությունը պարտավորեցնում է գործադիր իշխանությանը և դատարաններին՝ կիրառելու հիմնական իրավունքի նորմերը և անհրաժեշտության դեպքում՝ հարկադրելու դրանք:

Այսպիսով, հիմնական իրավունքների անմիջական գործողությունը նշանակում է, որ հիմնական իրավունքը իրավապահանջի տեսքով արդեն իսկ գործում է, այլ ոչ թե նոր միայն պետք է ստեղծվի օրենքի միջոցով: Այս առումով էլ հենց տարբերվում են 2015 թ. խմբագրությամբ Սահմանադրության 2-րդ և 3-րդ գլուխները: Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրված հիմնական իրավունքները և ազատությունները ուղղված են պետությանը. ամբողջ հանրային իշխանությունը կաշկանդված է³ հիմնական իրավունքներով և ազատություններով ինչպես նեգատիվ, այնպես էլ պոզիտիվ իմաստներով: Այսինքն՝ հանրային իշխանությունը մի կողմից՝ պետք է ձեռնպահ մնա հիմնական իրավունքներով պաշտպանված իրավական բարիքներին անհամաչափ միջամտելուց, մյուս կողմից՝ պոզիտիվ գործողություններով նպաստի հիմնական իրավունքների ակտիվ պաշտպանությանը և իրագործմանը: Հիմնական իրավունքների պարագայում 2015 թ. խմբագրությամբ Սահմանադրության 3-րդ հոդվածի 3-րդ մասը հնարավորություն է տալիս մարդուն հանրային իշխանությունից պահանջելու համապատասխան վարքագիծ և անհրաժեշտության դեպքում ստանալու դատական պաշտպանություն՝ հենվելով միայն Սահմանադրության համապատասխան դրույթների վրա:

Ի տարբերություն Սահմանադրության 2-րդ գլխի՝ 2015 թ. խմբագրությամբ Սահմանադրությունում սոցիալական ոլորտին վերաբերող բոլոր այն դրույթները, որոնք պարտավորեցնում են միայն օրենսդրին, ձևակերպված են որպես օրենսդրական երաշխիքներ⁴ Սահմանադրության 3-րդ գլխում: Դրանք սոցիալական, տնտե-

¹ St`u H.-J. Papier, Ch. Krönke, Grundkurs Öffentliches Recht 2 Grundrechte, 2. Aufl., Heidelberg 2015, էջ 3:

² St`u Б. Страшун, Статья 15 (Комментарий к Конституции Российской Федерации), под. общ. ред. В.Д. Карповича, 2-е изд., М., 2002, էջ 109:

³ 2015 թ. խմբագրությամբ Սահմանադրության 3-րդ հոդվածի 2-րդ մասը օգտագործում է «սահմանափակված է» եզրույթը, որի իմաստային շեշտադրումը հենց կաշկանդվածությունն է:

⁴ Սահմանադրության 82-85-րդ հոդվածներում ամրագրված են աշխատանքային պայմանների, սոցիալական ապահովության, արժանապատիվ գոյության և նվազագույն աշխատավարձի, առողջության պահպանության իրավունքները:

սական, մշակութային ոլորտներին առնչվող օրենսդրական նպատակներ են, որոնք անհատի համար չեն առաջացնում անմիջական իրավական պահանջի իրավունք, այլ պարտավորեցնում են միայն օրենսդիրն և գործադիրին՝ իրագործելու դրանք պետության «հնարավորության շրջանակներում»¹ :

Վերոհիշյալի համատեքստում 2005 թ. խմբագրությամբ Սահմանադրության 6-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված ամբողջ Սահմանադրության անմիջական գործողության վերաբերյալ դրույթի վերացումը միաժամանակ ընդգծում է փոփոխված Սահմանադրության 3-րդ հոդվածի 3-րդ մասի նորմատիվությունը: Հակառակ պարագայում նախկին 6-րդ հոդվածի 1-ին մասի հռչակագրային բնույթից կարելի էր հանգել այն սխալ եզրահանգման, որ նման բնույթ ունեւ նախկին 3-րդ հոդվածի 3-րդ մասը (որը գրեթե նույնական է գործող խմբագրությամբ 3-րդ հոդվածի 3-րդ մասի հետ):

Հիշատակման է արժանի նաև մեկ այլ կարևոր հանգամանք. 2015 թ. խմբագրությամբ Սահմանադրությունը, իրացնելով «մարդակենտրոն» սահմանադրության գաղափարը, անփոփոխելի հոդվածների շարքին է ավելացրել նաև 3-րդ հոդվածը (հոդված 203)²՝ սահմանադրական կարգավորումների առանցք դիտարկելով մարդուն՝ որպես բարձրագույն արժեք և նրա անօտարելի արժանապատվությունը: 3-րդ հոդվածի անփոփոխելիությունը դրանում ամրագրված դրույթներին հաղորդում է ավելի մեծ կայունություն, ինչի արդյունքում դրանց անմիջական գործողությունը կասկածից դուրս է: 3-րդ հոդվածի անփոփոխելիությունը ունի նաև այն հեռահար ազդեցությունը, որ արգելում է սահմանադրին հետագայում Սահմանադրությունը փոփոխելիս, հիմնական իրավունքները ձևակերպել այնպես, որ դրանք չառաջացնեն սուբյեկտիվ իրավունքներ:

Հիմնական իրավունքների անմիջական գործողությունը, սակայն, չի նշանակում, որ սահմանադրական նորմը ինքնին բավարար է Սահմանադրության պահանջների իրագործման համար: Սահմանադրական նորմի պահանջները առավելապես կենսագործվում են այլ իրավական ակտերի միջնորդավորմամբ՝ բովանդակային առումով կոնկրետացվելով, մանրամասնեցվելով դրանցում: Ինչպես հիմնական իրավունքների ուղղակի գործողությունը, այնպես էլ սահմանադրական այլ նորմերի գործողությունը չի բացառում օրենսդրի կողմից այդ իրավունքների մանրամասնեցումները, ինչպես նաև օրենքների վերապահումները²: Ճիշտ հակառակը, սահմանադրական նորմերի մանրամասնեցման և զարգացման բացակայությունը կարող է առաջ բերել բազմաթիվ խնդիրներ՝ իրավական բացեր, կոլիզիաներ և այլն: Սահմանադրության բնույթն ինքնին բացառում է բոլոր հասարակական հարաբերությունների մանրամասն կարգավորումը՝ թիրախավորելով միայն հասարակության և պետության կազմակերպման հետ կապված հիմնարար հարաբերությունները: Այս առումով 2015 թ. խմբագրությամբ Սահմանադրությունը նույնպես բազմաթիվ իրավիճակներում օրենսդիրն է վերապահում այս կամ այն հիմնարար իրավունքի սահմանները հստակեցնելու խնդիրը: Դա ամենևին էլ չի նշանակում, որ այդ իրավունքները չեն կարող գոյություն ունենալ, քանի դեռ օրենսդիրը չի միջամտել: Օրենսդրի միջամտության բացակայության պարագայում էլ, օրինակ, անձնական տվյալների պաշտպանության (հոդված 34), մարդու ազատ գործելու իրավունքները (հոդված 39), մտքի, խղճի և կրոնի ազատությունը (հոդված 41) և այլ իրավունքներ գոյություն ունեն և պետք է կիրառվեն: Սակայն միայն օրենսդիրն է իրավասու սահմանել դրանց իրականացման որոշակի սահմաններ: Եթե սահմանադրական

¹ Սոցիալական իրավունքների սահմանադրական ամրագրման մասին առավել մանրամասն տե՛ս Վ. Պողոսյան, Ն. Սարգսյան, Հայաստանի Հանրապետության 2015 թ. խմբագրությամբ Սահմանադրությունը. համառոտ պարզաբանումներ, Եր., 2016, էջ 39-42:

² Տե՛ս H. Dreier, Subjektiv-rechtliche und objektiv-rechtliche Grundrechtsgehalte, in: Jura, 1994, էջ 505 և 508:

նորմերի օրենսդրական մանրամասնեցումները բացակայում են, ապա իրավակիրառը պետք է որոշում կայացնի՝ հիմնվելով հենց Սահմանադրության վրա: Հիմնական իրավունքների «անմիջական գործողությունը» թույլ չի տալիս իրավակիրառին խուսափել պարտադիր սահմանադրաիրավական նորմերը կիրառելուց, անգամ եթե դրանց բովանդակությունը համառոտ է կամ անորոշ:

Անհրաժեշտ է նաև նկատել, որ բազմաթիվ հիմնական իրավունքների արդյունավետ իրականացումը կախված է համապատասխան կազմակերպական կառուցակարգերից և ընթացակարգերից: Օրինակ՝ հավաքների ազատությունն արդյունավետ կիրականացնելու համար անհրաժեշտ է հստակ սահմանել, թե որ մարմինն է իրավասու իրականացնելու իրազեկման ընթացակարգը, սահմանել իրազեկման քննարկման և որոշումների կայացման կարգը, լսման ընթացակարգը և այլն: Դա չի նշանակում, որ նշված իրավունքները և ազատությունները երաշխավորելու համար օրենսդիրն ազատ է միջամտելու կամ չմիջամտելու, այլ հակառակը՝ դա վերջինինս ուղղակի պարտականություն է՝ Սահմանադրության 3-րդ հոդվածի 2-րդ մասի ուժով: Այս առումով հիմնական իրավունքների անմիջական գործողությունը ոչ միայն պարտավորեցնում է օրենսդիրն ձեռնպահ մնալ հիմնական իրավունքներին ոչ իրավաչափ միջամտություններից, այնպես էլ ստիպում է պոզիտիվ գործողություններ ձեռնարկել հիմնական իրավունքների արդյունավետ իրականացման համար:

Դատարանների և վարչական մարմինների կողմից Սահմանադրության կիրառման հիմնախնդիրը

Դատարանների և վարչական մարմինների կողմից Սահմանադրությունը կիրառելիս առաջ է գալիս այն խնդիրը, թե գործի փաստական հանգամանքները պարզելուց հետո ո՞ր նորմը պետք է կիրառվի, եթե գործի լուծման համար վերաբերելի են ինչպես Սահմանադրության, այնպես էլ օրենքի կամ ենթաօրենսդրական իրավական ակտի նորմերը: Ինչպիսի՞նք է Սահմանադրության գերակայության հարաբերակցությունը նորմերի կիրառման աստիճանակարգության հետ (*ա*), և ի՞նչ պահանջներ է դնում Հայաստանի Սահմանադրությունը դատարանների (*բ*) և վարչական մարմինների (*գ*) առջև:

ա) Սահմանադրության նորմերի գործողության գերակայությունը և կիրառման աստիճանակարգությունը

Սահմանադրության գերակայության սկզբունքի հիմքում դրված է իրավակարգի աստիճանակարգությունը¹: Սահմանադրությունը գտնվում է իրավական նորմերի հիերարխիայի գագաթին, նրան ստորադաս են սովորական օրենքները և օրենքների հիման վրա ընդունված ակտերը: Սահմանադրական նորմերի գերակայությունը նշանակում է, որ իրավական նորմերի համակարգում Սահմանադրության նորմերն ունեն բարձրագույն իրավաբանական ուժ, այսինքն՝ Սահմանադրությունից ավելի ցածր մակարդակում գտնվող բոլոր նորմերը պետք է համապատասխանեն Սահմանադրությանը (Սահմանադրության 5-րդ հոդված, մաս 1 և 2): Սահմանադրության նորմերի գերակայությունը նշանակում է միայն սահմանադրության նորմե-

¹ Իրավական համակարգի աստիճանակարգման ուսմունքը մշակվել է Ադուֆ Յուլիուս Մերկլի կողմից (ամփոփ՝ **A. J. Merkl**, Prolegomena einer Theorie des rechtlichen Stufenbaus, in: FS Hans Kelsen, Wien 1931, էջ 252-294) և Հանս Բելգենի կողմից ինտեգրվել է իրավունքի մաքուր վարդապետության համակարգում (**H. Kelsen**, Reine Rechtslehre, 1. Aufl., Leipzig und Wien 1934, էջ 62-89, Kelsen, Reine Rechtslehre, 2. Aufl., Wien 1960, էջ 228-282): Այն պոզիտիվ իրավունքի կառուցվածքային վերլուծություն է, որը փորձում է իրավական համակարգում առկա կապերը ներառել տեսական մի մոդելի մեջ, որը հնարավորություն է տալիս նկարագրել տվյալ իրավակարգի հիերարխիկ կառուցվածքը: Աստիճանակարգման կոնցեպցիայի համար ելակետային է այն գաղափարը, որ պոզիտիվ իրավակարգերը հենց իրենք են կարգավորում ինչպես իրավական նորմերի ստեղծումը, այնպես էլ դրանց վերացումը:

րի գործողության առաջնություն. այն պատասխանում է բացառապես այն հարցին, թե ինչպես պետք է վարվել սահմանադրության դրույթի և սովորական իրավունքի դրույթի միջև բովանդակային հակասության դեպքում: Սահմանադրության գերակայությունը չի կարող պատասխան տալ այն հարցին, թե կա՞րողյոք նման հակասություն և ի՞նչ չափով: Սահմանադրության գերակայության սկզբունքը արդեն իսկ նախադրում է, որ նորմերի միջև առկա է կոնֆլիկտ: Դրա առկայության պարզումը կատարվում է նորմերի մեկնության և դրա արդյունքները իրար հետ համեմատելու միջոցով¹: Սահմանադրության գերակայությունը կոլիզիաները լուծող նորմ է, որը պահանջում է, որ Սահմանադրությանը հակասող իրավական նորմերը հայտնաբերվեն և դուրս բերվեն իրավական համակարգից: Դա, սակայն, չի նշանակում, որ ցանկացած մարմին իրավասու է վերացնելու այդ հակասությունը:

Յուրաքանչյուր իրավանորմ իր գործողությունը ստանում է իրենից բարձր աստիճանի վրա գտնվող նորմերից: Սահմանադրությունը կարգավորում է օրենքների ստեղծումը, օրենքները՝ ենթաօրենսդրական ակտերի: Ավելի բարձր աստիճանի վրա գտնվող նորմերը առաջին հերթին սահմանում են նորմադրման ձևն ու եղանակը, ինչպես նաև կարող են այս կամ այն չափով սահմանել նորմի հնարավոր բովանդակությունը: Սահմանադրությունը սկզբունքորեն կարող է սահմանափակված լինել միայն նրանով, որ կարգավորի ընդամենը իրավունքի ստեղծման ձևը, ընթացակարգը և իրավասությունը՝ չպարունակելով բովանդակային որևէ պահանջներ: Բովանդակային պահանջներ պարունակելու պարագայում ևս սահմանադրությունն ամբողջությամբ չի կանխորոշում օրենքների բովանդակությունը, և սահմանադրությունից, որպես կանոն, հնարավոր չէ արտածել առանձին օրենքների կոնկրետ բովանդակությունը: Սահմանադրությունն ընդամենը որոշակի սահմաններ է դնում օրենքների առջև: Առաջին հերթին խոսքն այստեղ հիմնական իրավունքների մասին է: Բովանդակային առումով սահմանադրությունը օրենքի համար սահմանում է միայն որոշակի շրջանակ, որն էլ լրացվում է օրենսդրի կողմից: Քանի որ օրենսդիրը միայն այդ շրջանակում է կաշկանդված սահմանադրական նորմով, իսկ այդ շրջանակից դուրս ունի որոշումների կայացման լայն հայեցողական ասպարեզ, ապա օրենսդիրը հանդես է գալիս երկու կերպարանքով՝ մի կողմից որպես իրավակիրառ, իսկ մյուս կողմից՝ որպես իրավաստեղծ մարմին²: Իրավաստեղծման յուրաքանչյուր աստիճանում իրավունքը զնալով ավելի է կոնկրետացվում և անհատականացվում: Ավելի ցածր աստիճանի նորմի բովանդակությունը ամբողջությամբ պարունակված չէ ավելի բարձր աստիճանի նորմի մեջ, և կոնկրետացման համար միշտ մնում են ազատ տարածքներ: Դրանք նվազում են վերևից ներքև. օրենսդրի համար ինքնուրույն իրավաստեղծության սահմաններն ավելի մեծ են, քան գործադիր իշխանության կամ դատարանի համար³:

Սահմանադրական նորմերի գերակայությունը պետք է տարբերակել իրավական նորմերի կիրառման աստիճանակարգությունից, այսինքն՝ թե իրավական նորմերը ինչ հերթականությամբ պետք է կիրառվեն: Այս առումով որևէ տարբերություն չկա, թե խոսքը հիմնական իրավունքի նորմի⁴, թե՞ Սահմանադրության այլ նորմերի կիրառման մասին է:

Ցանկացած իրավական նորմի կիրառման ժամանակ համապատասխան իրավակիրառը պետք է մեկնաբանի կիրառման ենթակա իրավական նորմը և նաև ստուգի, թե արդյոք այն համապատասխանում է ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող իրավական նորմին: Այդուհանդերձ, այդ ստուգումը դեռևս չի նշանա-

¹ Տե՛ս **M. Jestaedt**, Grundrechtsentfaltung im Gesetz, Tübingen 1999, էջ 19:

² Տե՛ս **A. J. Merkl**, Das doppelte Rechtsantlitz. Eine Betrachtung aus der Erkenntnistheorie des Rechtes (1918), in: A. J. Merkl, Gesammelte Schriften, Bd. 1/1, Berlin 1993, S. 227-252:

³ Տե՛ս **M. Jestaedt**, § 11, Maßstäbe des Verwaltungshandelns, in: H.-U. Erichsen, D. Ehlers, Allgemeines Verwaltungsrecht, 14. Aufl., 2011, էջ 333-336:

կում, որ համապատասխան իրավակիրառ մարմինը դրանով վերջնականորեն վճռում է նաև նորմի իրավաչափությունն ու սահմանադրականությունը:

Սահմանադրության գերակայությունը բավարար չէ, որ դրան հակասող նորմը դուրս մղվի իրավական համակարգից և չկիրառվի: Սահմանադրությունից ցածր աստիճանի վրա գտնվող նորմերի գոյությունը պարզապես անհմաստ կդառնար, եթե յուրաքանչյուր իրավակիրառ իրավունք ունենար որոշելու, որ ինքը կաշկանդված չէ դրանցով և միանգամից դիմեր իր կարծիքով կիրառման ենթակա Սահմանադրության նորմին՝ այդ նորմին տալով իր սեփական մեկնաբանությունը:

Այդ է պատճառը, որ իրավական նորմերը *կիրառելիս* գործում է ճիշտ հակառակ աստիճանակարգությունը՝ *ցածրից դեպի բարձր*: Ուստի Սահմանադրության անմիջական գործողությունը ամենևին էլ չի նշանակում, որ իրավակիրառը պետք է անմիջականորեն դիմի Սահմանադրության նորմին՝ իրավահարաբերության նկատմամբ կիրառման ենթակա իրավունքը ընտրելիս: Առաջին հայացքից կարող է տպավորություն ստեղծվել, թե Սահմանադրությունն այս պարագայում արժեզրկվում է, և հարց կարող է առաջանալ, թե ինչպես կարելի է ընդհանարապես խոսել Սահմանադրության բարձրագույն իրավաբանական ուժի մասին: Սակայն իրավական նորմերի՝ ցածրից դեպի բարձր կիրառման սկզբունքը բխում է ավելի կոնկրետ և մանրամասն ձևակերպված օրենքի պարտադիրությունից: Հակառակ պարագայում, որոշում ընդունող իրավակիրառը կկարողանար հեշտորեն և հայեցողականորեն յուրաքանչյուր առանձին դեպքում «մի կողմ» դնել օրենքը և միանգամից դիմել որպես կանոն ավելի ընդհանուր ձևակերպում ունեցող սահմանադրական նորմին:

բ) Սահմանադրության կիրառումը դատարանների կողմից

Սահմանադրական դատարանի մենաշնորհը՝ համապարտադիր ձևով որոշելու օրենքի սահմանադրականությունը, սահմանադրական վերահսկողության այսպես կոչված կենտրոնացված համակարգի բնորոշ հատկանիշն է: Այս մոդելի հիմքում ընկած է այն գաղափարը, որ դատարանները չպետք է իրավասու լինեն կոնկրետ գործով մերժելու օրենքի դրույթների կիրառումը, քանի որ դա կարող է հանգեցնել իրավունքի որոշակիության տեսանկյունից վտանգավոր իրավիճակների: Նման պարագայում կարող են խաթարվել նույնական իրավիճակներում օրենքների միատեսակ մեկնաբանությունը և կիրառումը, որն էլ իր հերթին կառաջացնի օրենքի առջև հավասարության սկզբունքի խախտման ռիսկեր: Միաժամանակ պարզ չի լինի նաև, թե որքանով են մի դատարանի նման որոշումները պարտադիր լինելու այլ դատարանների համար: Բացի այդ, կարող են առաջանալ նաև կոնֆլիկտներ սահմանադրական դատարանի դատական պրակտիկայի հետ:

Դատարանների կողմից օրենքի նորմի սահմանադրականության հարցով սահմանադրական դատարան դիմելու օգտին է խոսում նաև իշխանությունների բաժանման սկզբունքը: Ըստ այդ սկզբունքի՝ օրենսդիր իշխանությունը վերապահված է խորհրդարանին, իսկ այլ պետական մարմինների միջամտությունը այդ ոլորտին թույլատրելի է միայն Սահմանադրությամբ ուղղակիորեն սահմանված դեպքերում:

Կենտրոնացված սահմանադրական վերահսկողության մոդելը Հայաստանի Հանրապետությունը որդեգրել է դեռևս 1995 թ. Սահմանադրությամբ: 2015 թ. խմբագրությամբ Սահմանադրության 167-րդ հոդվածի 1-ին մասը հետևողականորեն Սահմանադրական դատարանին է վերապահում Սահմանադրության գերակայությունն ապահովելու առաքելությունը: Դա նշանակում է, որ Հայաստանի Հանրապետությունում Սահմանադրական դատարանը հատուկ տիպի պետական մարմին է, որը մտնելով պետական դատարանների համակարգի մեջ, ի տարբերություն մյուս բոլոր դատարանների, Սահմանադրության ուժով կոչված է ապահովելու Սահմանադրության գերակայությունը:

Սահմանադրության միասնական կիրառության ապահովման ուղղությամբ Հայաստանի Հանրապետության 2015 թ. խմբագրությամբ Սահմանադրության 169-րդ հոդվածի 4-րդ մասը կարևոր առաջընթաց քայլ է կատարել: 169-րդ հոդվածի 4-րդ

մասի համաձայն՝ «Դատարաններն իրենց վարույթում գտնվող կոնկրետ գործով կիրառման ենթակա նորմատիվ իրավական ակտի սահմանադրականության հարցով *դիմում են*՝ Սահմանադրական դատարան, եթե *հիմնավոր կասկածներ* ունեն դրա սահմանադրականության վերաբերյալ և գտնում են, որ տվյալ գործի լուծումը հնարավոր է միայն այդ նորմատիվ իրավական ակտի կիրառման միջոցով» (ընդգծումները հեղինակներինն են):

Սահմանադրության 169-րդ հոդվածի 4-րդ մասը նորմատիվ իրավական ակտերի սահմանադրականության որոշման հարցով Սահմանադրական դատարան դիմելը բոլոր դատարանների համար սահմանել է որպես *պարտականություն*։ «*Դիմում են*» արտահայտությունը իրավաբանական լեզվում իմպերատիվ է և դատարանին չի թողնում որևէ հայեցողություն Սահմանադրական դատարան դիմելու հարցում։ Դատարանն իրավունք չունի նորմատիվ իրավական ակտը ինքնուրույն որակել հակասահմանադրական և արդյունքում՝ ուղղակիորեն կիրառել Սահմանադրությունը, քանի որ սահմանադրականության հարցի որոշումը բացառապես Սահմանադրական դատարանի լիազորությունն է։

Այս առումով հետաքրքիր է համեմատություն անցկացնել նախկին՝ 2005 թ. խմբագրությամբ Սահմանադրության և նոր կարգավորումների միջև։ 2005 թ. խմբագրությամբ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով նախատեսված էր, որ դատարաններն իրենց վարույթում գտնվող կոնկրետ գործին առնչվող նորմատիվ ակտերի դրույթների սահմանադրականության հարցերով «*կարող են*» դիմել Սահմանադրական դատարան։ Սահմանադրական այս նորմը դատավարական օրենսդրության մեջ ձևակերպվել էր որպես Սահմանադրական դատարան դիմելու հարցում դատարանի իրավունք¹։ Մինչդեռ «Սահմանադրական դատարանի մասին» 2006 թ. օրենքի² 71-րդ հոդվածի 1-ին մասը Սահմանադրական դատարան դիմելը դատարանների համար սահմանում էր որպես պարտականություն³ և, ըստ էության, բացառում էր սովորական դատարանների կողմից օրենքի հակասահմանադրականության հիմքով դրա կիրառման մերժումը՝ առանց Սահմանադրական դատարան դիմելու։

Այսպիսով, մինչև 2015 թ. խմբագրությամբ Սահմանադրության փոփոխությունները առկա իրավիճակի վերլուծությունը ցույց է տալիս, որ դատարանների կողմից սահմանադրականության որոշման հարցով Սահմանադրական դատարան դիմելու «իրավունքի», թե՞ պարտականության» հարցերը օրենսդրությամբ միանշանակ կարգավորված չեն եղել։ Փոփոխված Սահմանադրության 169-րդ հոդվածի 4-րդ մասի ուժով Հայաստանի Հանրապետությունում սահմանադրական մակարդակով հստակեցված է դատարանների կողմից Սահմանադրական դատարան դիմելու պարտականության հարցը։ Սակայն Քրեական դատավարության օրենսգրքում դեռևս շարունակվում է պահպանվել Սահմանադրական դատարան դիմելու դա-

¹ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 31-րդ հոդվածի 2-րդ մաս (ընդունվել է 1998 թ. հուլիսի 1-ին, ՀՕ-248, ՀՀՊՏ 1998.09.21/22(55), Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 106-րդ հոդվածի 2-րդ մաս (ընդունվել է 1998 թ. հունիսի 17-ին, ՀՕ-247, ՀՀՊՏ 1998.09.09/20(53), ուժը կորցրել է 09.04.2018 թ.), Վարչական դատավարության օրենսգրքի 94-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետ (ընդունվել է 2013 թ. դեկտեմբերի 5-ին, ՀՕ-139-Ն, ՀՀՊՏ 2013.12.28/73(1013).1, Հոդ.1186.1.):

² Ընդունվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից 2006 թվականի հունիսի 1-ին, ՀՕ-58-Ն, ՀՀՊՏ 2006.06.21/32(487) Հոդ. 645:

³ «... Սահմանադրական դատարան *դիմում են* դատարանները..., եթե *գտնում են*, որ Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետով սահմանադրական դատարանի ենթակայությանը վերապահված որևէ իրավական ակտի, որն ունի նորմատիվ բնույթ, դրույթ կամ դրույթները, որոնք ենթակա են կիրառման իրենց վարույթում գտնվող կոնկրետ գործով, հակասում են Սահմանադրությանը» (ընդգծումները հեղինակներինն են):

տարանի հայեցողությունը¹, ինչի վրա Սահմանադրական դատարանը Կառավարության և Ազգային ժողովի ուշադրությունն է հրավիրել իր 2019 թ. մայիսի 7-ի ՍԴՈ-1459 որոշման մեջ²:

2015թ. խմբագրությամբ Սահմանադրության 169-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ դատարանի համար Սահմանադրական դատարան դիմելու պարտականությունը ծագում է երկու պայմանի միաժամանակյա առկայության պարագայում՝ 1) եթե դատարանի մոտ առաջանում է «հիմնավոր կասկած» կիրառման ենթակա նորմատիվ իրավական ակտի սահմանադրականության հարցով, և 2) դատարանը գտնում է, որ տվյալ գործի լուծումը հնարավոր է միայն այդ նորմատիվ իրավական ակտի կիրառման միջոցով: «Հիմնավոր կասկած» եզրույթը նշանակում է, որ նորմատիվ իրավական ակտի սահմանադրականության հարց բարձրացնելու համար բավարար չէ հակասահմանադրականության վերաբերյալ պարզապես տարակուսանքը: Սահմանադրականության վերաբերյալ «կասկածը» պետք է լինի «հիմնավոր», այսինքն՝ «ամուր, հաստատ հիմքեր ունեցող»³: Դա նշանակում է, որ դատարանը պետք է ունակ լինի և պարտավոր է հիմնավորել իր դիրքորոշումը՝ նորմատիվ ակտի վիճարկվող դրույթի՝ Սահմանադրությանը հակասելու հանգամանքի առնչությամբ⁴: Հակառակ դեպքում սուկ կասկածների հիման վրա դատարանը չի կարող պարզապես շրջանցել կիրառման ենթակա իրավական ակտը, քանի որ, համաձայն Սահմանադրության 164-րդ հոդվածի 1-ին մասի, դատավորը գործում է ոչ միայն Սահմանադրությանը, այլև *օրենքներին* համապատասխան:

Այն, որ դատարանների համար սահմանադրականության հարցի լուծման ճանապարհը Սահմանադրական դատարան դիմելն է, Սահմանադրական դատարանը զարգացրել է նաև վերը նշված 7 մայիսի 2019 թ. ՍԴՈ-1459 որոշման մեջ: Սահմանադրական դատարանը արձանագրել է, որ «ի տարբերություն **Սահմանադրական դատարանի**, որն արդարադատություն իրականացնելիս **ենթարկվում է միայն Սահմանադրությանը** (Սահմանադրության 167-րդ հոդվածի 2-րդ մաս), **մյուս բոլոր դատարանները կաշկանդված են և՛ Սահմանադրությամբ, և՛ օրենքներով** (Սահմանադրության 164-րդ հոդվածի 1-ին մաս), ուստի **օրենքն** այդ դատարանների կողմից կարող է ոչ թե վերացվել, անվավեր ճանաչվել, վերանայվել, այլ **միայն կիրառվել**: Ավելին՝ օրենքի պարտադիր պահանջները, այդ թվում՝ օրենքով սահմանված

¹ 2018 թ. փետրվարի 9-ին ընդունված Քաղաքացիական դատավարության նոր օրենսգրքի (ՀՀՊՏ 2018.03.05/16(1374) Հոդ. 208, ՀՕ-110-Ն) 4-րդ հոդվածի 7-րդ կետը վերարտադրում է 2015 թ. խմբագրությամբ Սահմանադրության 169-րդ հոդվածի 4-րդ մասի ձևակերպումը: Վարչական դատավարության օրենսգրքի նորմը դեռևս անփոփոխ է:

² Որբերտ Քոչարյանի դիմումի հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 419-րդ հոդվածի 2-րդ մասի Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործով, կետ 4.7, պարբերություն 16:

³ Տե՛ս **Ա. Մ. Սուրիսյան**, Հայոց լեզվի հոմանիշների բացատրական բառարան, 2-րդ հրատարակություն, Եր., 2009 թ. էջ 633:

⁴ Հիմնավորվածության պահանջը բնորոշ է նաև Գերմանիային, Ֆրանսիային, Ռուսաստանին և այլն: Այսպես, օրինակ, *Գերմանիայի* հիմնական օրենքի 100-րդ հոդվածը այս առումով օգտագործում է «եթե դատարանը *եզրահանգում է*, որ օրենքը...հակասահմանադրական է...» եզրույթը: Դա մեկնաբանվում է այնպես, որ դատարանը պետք է համոզված լինի հակասահմանադրականության հարցում և ոչ թե ունենա սուկ կասկածներ (Տե՛ս **Դ. Байер**, Прямое применение конституционных норм (размышления с немецкой позиции)// Конституционное Правосудие, Выпуск 2(52) 2011, էջ 27): *Ֆրանսիայի* 2009 թ. դեկտեմբերի 10-ի օրգանական օրենքով (Loi organique n° 2009-1523, du 10 décembre 2009, նշվ. վերը) ևս նախատեսում է դատարանի կողմից սահմանադրականության հարցը Պետական խորհուրդ կամ վճռաբեկ դատարան ներկայացնելու, իսկ վերջիններիս կողմից՝ Սահմանադրական խորհուրդ դիմելու համար «*հիմնավորված որոշման*» պահանջ (հոդվածներ 23-2 և 23-7): «Ռուսաստանի Դաշնության Սահմանադրական դատարանի մասին» օրենքի 101-րդ հոդվածը օգտագործում է «դատարանը, գալով ...*եզրահանգման*» կապակցությունը:

պարտադիր լիազորությունները, չեն կարող չկիրառվել, բացառությամբ այն միակ դեպքի, երբ դատարանը կասեցնում է վարույթը (ինչը, ի դեպ, նրա պարտականությունն է, եթե առկա են սահմանադրականության վերաբերյալ հիմնավոր կասկածներ (Սահմանադրության 169-րդ հոդվածի 4-րդ մաս), և դիմում է Սահմանադրական դատարան» (ընդգծումները Սահմանադրական դատարանին են)¹:

Այսպիսով, որդեգրելով սահմանադրական վերահսկողության կենտրոնացված կամ եվրոպական մոդելը, Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում տարանջատվում են «մեկնաբանման իրավասությունը» և «անվավեր ճանաչելու իրավասությունը», որոնցից առաջինը վերապահված է բոլոր դատարաններին, իսկ երկրորդը՝ միայն Սահմանադրական դատարանին: Այս հարցերին Սահմանադրական դատարանը հանգամանորեն անդրադարձել է իր մեկ այլ 2019 թ. հունվարի 25-ի ՍԴԱՌ-7 աշխատակարգային որոշմամբ², որում իրավացիորեն ընդգծել է, որ «որպես Սահմանադրության գերակայության ապահովման միջոց՝ **Սահմանադրության վերջնական և համապարտադիր մեկնաբանությունն ու կիրառումն է** Սահմանադրական դատարանի բացառիկ իրավասությունը, իսկ հանրային իշխանության 4 բոլոր մարմինները՝ Սահմանադրությամբ և օրենքներով ամրագրված իրենց լիազորությունների շրջանակներում մեկնաբանում և կիրառում են Սահմանադրությունը, հատկապես եթե, Սահմանադրության 3-րդ հոդվածին համահունչ, խոսքն անմիջականորեն գործող իրավունքի, այն է՝ մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների մասին է, որոնցով սահմանափակված է **ամբողջ հանրային իշխանությունը**»:

Իր այս դիրքորոշումը Սահմանադրական դատարանը հիմնավորել է նաև այն հանգամանքով, որ «Սահմանադրական դատարանն ինքն է վերջնարդյունքում ապահովում Սահմանադրության միատեսակ կիրառությունը՝ իր լիազորությունների շրջանակներում լուծում տալով Սահմանադրության մեկնաբանության առնչությամբ առաջացած բոլոր վեճերին: Սահմանադրական արդարադատության էությունը կարող էր նենգափոխվել կամ այդ արդարադատության արդյունավետությունը կարող էր նվազել, եթե Սահմանադրության մեկնաբանության և կիրառման հետ կապված վեճերի վերջնական լուծումը վերապահված լիներ հանրային իշխանության մեկ այլ մարմնի»³:

2015 թ. խմբագրությամբ Սահմանադրության 169-րդ հոդվածի 4-րդ մասի մյուս առանձնահատկությունն այն է, որ Սահմանադրական դատարանը դիմելու պարտականությունը նախատեսած է ոչ միայն *օրենքների*, այլև *բոլոր նորմատիվ իրավական ակտերի* սահմանադրականության հարցով: Այս առումով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մոտեցումները ավելի խիստ են՝ համեմատած նույն Գերմանիայի և Ֆրանսիայի հետ, որտեղ դատարանը, այնուամենայնիվ, կարող է ինքնուրույն գնահատել օրենքից ցածր իրավաբանական ուժ ունեցող ակտերի սահմանադրականության հարցը: Գերմանիայի Ղաշնային սահմանադրական դատարանը և դոկտրինայի գերակշիռ մասը գտնում են, որ Հիմնական օրենքի 100-րդ հոդվածը նորմերի կոնկրետ վերահսկողության առարկա է դարձնում միայն ձևական առումով օրենքները (այն էլ միայն հետսահմանադրական օրենքները), բայց ոչ նաև ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերը: Նման մոտեցման հիմքում ընկած է այն գաղափարը, որ այս վարույթն առաջին հերթին նպատակ

¹ Կետ 4.7, պարբերություն 8:

² Որբերտ Քոչարյանի դիմումի հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 414²-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի քննությունը մերժելու մասին, կետ 4.8:

³ Սահմանադրական դատարանը այս դիրքորոշումը հետագայում կրկնել է նաև վերը նշված ՍԴՌ-1459 որոշման մեջ:

է հետապնդում օրենսդրին պաշտպանել դատարաններից, որոնք կարող են անտեսել օրենսդրի կամքը: Մինևույն ժամանակ գերմանական դոկտորինայում դեռևս 1960-ական թվականներից բերվել են ծանրակշիռ փաստարկներ նման մոտեցման դեմ, որոնք, սակայն, սահմանադրական դատարանը որևէ կերպ հաշվի չի առել: Մասնավորապես, ամբողջովին արհեստական է նորմերի վերացական և կոնկրետ վերահսկողության միջև այն ջրբաժանը, ըստ որի նորմերի վերացական վերահսկողության ժամանակ սահմանադրական դատարանի նպատակը սահմանադրության պաշտպանությունն է, իսկ վերացական վերահսկողության դեպքում՝ օրենսդրի կամքի պաշտպանությունը դատարաններից¹: Ինչպես նորմերի վերացական, այնպես էլ կոնկրետ վերահսկողության պարագայում առաջնայինը իրավական նորմերի սահմանադրականության որոշման կենտրոնացումն է մեկ դատարանի, այն է՝ սահմանադրական դատարանի ձեռքբերում, քանի որ դրանով են երաշխավորվում իրավունքի միասնականությունը և իրավական անվտանգությունը²: Ըստ այդմ Հայաստանի Սահմանադրության որդեգրած մոտեցումն ավելի համահունչ է սահմանադրական վերահսկողության միասնականության գաղափարին և ապահովում է անվավեր իրավական նորմերի դուրսբերումը երկրի իրավական համակարգից:

Սահմանադրության գերակայության երաշխավորման մեխանիզմների համատեքստում կարևոր է ընդգծել նաև այն հանգամանքը, որ եթե սովորական դատարանը «դժկամություն» դրսևորի օրենքների սահմանադրականության ապահովմանը նպաստելու հարցում, ապա օգնության է գալիս 2015 թ. խմբագրությամբ Սահմանադրության 169-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետում ամրագրված մյուս մեխանիզմը: Այն թույլ է տալիս յուրաքանչյուր անձի դիմել Սահմանադրական դատարան «կոնկրետ գործով, երբ առկա է դատարանի վերջնական ակտը, սպառվել են դատական պաշտպանության բոլոր միջոցները և վիճարկում է այդ ակտով իր նկատմամբ կիրառված նորմատիվ իրավական ակտի դրույթի սահմանադրականությունը, ինչը հանգեցրել է Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրված իր հիմնական իրավունքների և ազատությունների խախտման հաշվի առնելով նաև համապատասխան դրույթին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությունը»:

Այսպիսով, վերլուծելով 2015 թ. խմբագրությամբ Սահմանադրության վերոհիշյալ դրույթները, կարելի է արձանագրել, որ սահմանադիրը դատարանների պարագայում հաջողությամբ լուծել է մի կողմից՝ Սահմանադրության ռեալ գործողության ապահովման, մյուս կողմից՝ Սահմանադրությանը օրենքների համապատասխանության ապահովման խնդիրը:

Վերոշարադրյալը ամենևին էլ չի նշանակում, որ դատարանը կամ վարչական մարմինը երբևէ անմիջականորեն չի կիրառում Սահմանադրությունը: Ինչպես դատարանները, այնպես էլ վարչական մարմինները պարտավոր են դիմել հենց Սահմանադրությանը այն դեպքերում, երբ չկա օրենքի համապատասխան կարգավորում, կամ այն բացեր ունի³:

գ) Սահմանադրության կիրառումը վարչական մարմինների կողմից

Ինչպես դատարանների պարագայում, այնպես էլ վարչական մարմինների դեպքում պետք է գործի նույն՝ առավել ցածր իրավական ակտից բարձր կիրառելու սկզբունքը: Եթե վարչական մարմինը գտնում է, որ առկա է օրենքի դրույթի կամ անմիջականորեն ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտի սահմանադ-

¹ St´u K. Stern, in: Bonner Kommentar, Art. 100 RN 60, էջ 26, K. Hesse, Grundzüge des Verfassungsrechts der Bundesrepublik Deutschland, 20. Aufl. 1995, RN 683, 686, էջ 284-285:

² St´u K. Schlaich, S. Koriototh, Das Bundesverfassungsgericht. Stellung, Verfahren, Entscheidungen, 11. Aufl., 2018, RN 138, էջ 123:

³ Շատ երկրներում սահմանադրության և մյուս իրավական ակտերի միջև հակասությունները հանգուցալուծելու մեկ այլ մեխանիզմ է սահմանադրությանը համահունչ մեկնաբանումը, որի կիրառման թույլատրելիությունը և նպատակահարմարությունը Հայաստանի իրավական համակարգում առանձին ուսումնասիրության առարկա են:

րականության խնդիր, ապա նա պետք է կիրառի օրենքը կամ համապատասխան ենթաօրենսդրական ակտը՝ հնարավորության դեպքում փորձելով խնդիրը հաղթահարել մի շարք եղանակներով: Հաշվի առնելով, որ վարչական մարմինները ունեն ուղղահայաց, հիերարխիկ կառուցված և գտնվում են ստորադասը վերադասին ենթակայության հարաբերությունների մեջ, այս պարագայում վարչական մարմնի համար հնարավոր են խնդրի լուծման հետևյալ տարբերակները.

- նորմատիվ իրավական ակտի փոփոխության միջնորդության ներկայացում վերադասության կարգով՝ օրենսդրական նախաձեռնություն իրավունք ունեցող սուբյեկտին, տվյալ դեպքում՝ Կառավարությանը, կամ

- Սահմանադրության 169-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված սուբյեկտների, մասնավորապես Կառավարության միջոցով դիմումի ներկայացում Սահմանադրական դատարան:

Նշված տարբերակների իրագործելիությունը ապահովելու համար գտնում ենք, որ նպատակահարմար է օրենքով նախատեսել համապատասխան մեխանիզմներ, որոնք կմանրամասնեցնեն ընթացակարգերի և ժամկետների հետ կապված հարցերը, կպարտավորեցնեն վարչական մարմինն յուրաքանչյուր կոնկրետ դեպքում գնահատելու կիրառման ենթակա նորմատիվ իրավական ակտի սահմանադրականության հարցը, կհստակեցնեն, թե ինչպես պետք է վարվի վարչական մարմինը, եթե գտնում է, որ ավելի ցածր իրավաբանական ուժ ունեցող ակտը չի համապատասխանում Սահմանադրությանը, և կնախատեսեն վերադասության կարգով նորմատիվ իրավական ակտի սահմանադրականության ստուգման մեխանիզմները՝ ըստ անհրաժեշտության և հնարավորության կասեցնելով նաև վարչական ակտի կատարումը:

Վարչական մարմինների կողմից նորմատիվ իրավական ակտերի կիրառման հերթականության վերաբերյալ վերը բերված փաստարկներն էլ ավելի են ամրապնդվում, երբ զուգահեռներ ենք տանում նաև 2015 թ. խմբագրությամբ Սահմանադրության 169 հոդվածի 1-ին մասի 9-րդ կետի հետ: Այն միայն գլխավոր դատախազին է վերապահում Սահմանադրական դատարան դիմելու *իրավունքը*՝ «դատախազության կողմից իրականացվող կոնկրետ վարույթին առնչվող նորմատիվ իրավական ակտերի դրույթների սահմանադրականության հարցերով...»: Այսինքն, նույն տրամաբանությամբ, ինչ վարչական մարմինների պարագայում, սահմանադրական նորմը դատախազության համակարգի մյուս դատախազներին իրավունք չի վերապահում չկիրառել օրենքը: Հակասահմանադրականության հարցի առնչվելիս դատախազները, ըստ էության, պետք է այն բարձրացնեն վերադասության կարգով մինչև գլխավոր դատախազ, քանի որ վերջինս ղեկավարում է դատախազություն միասնական համակարգը (Սահմանադրության հոդված 176-րդ, մաս 1):

Հարկ է նկատել նաև, որ ինչպես վարչական մարմինների, այնպես էլ դատախազության պարագայում Սահմանադրությունը չի պարունակում Սահմանադրական դատարան դիմելու ուղղակի պահանջ: Սակայն եթե վարչական մարմնի վերադասը կամ գլխավոր դատախազը հանդգնած է, որ օրենքը հակասահմանադրական է, ապա վերջիններս պարզապես չեն կարող պահանջել հակասահմանադրական օրենքի կիրառում՝ հենց միայն Սահմանադրության 3-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերի, 5-րդ հոդվածի 1-ին մասի, 6-րդ հոդվածի 1-ին մասի ուժով:

Ի վերջո, վարչական մարմինների և դատախազության պարագայում սահմանադրի վերոհիշյալ մոտեցումները հիմնավոր են նաև այն պատճառով, որ վերջիններիս գործողությունների և անգործության դեմ գոյություն ունեն պաշտպանության սահմանադրորեն երաշխավորված մի շարք այլ մեխանիզմներ. առկա են դատական պաշտպանության, դատական բողոքարկման, իրավական ակտերի օրինականության նկատմամբ դատական վերահսկողության և անհատական սահմանադրական գանգատի մեխանիզմները, որի միջոցով էլ անհրաժեշտության դեպքում հնարավոր է կանխել հիմնական իրավունքների խախտումները և վերականգնել

խախտված իրավունքները:

Իհարկե, միշտ էլ կարելի է որպես հակափաստարկ բերել այն, որ 2015թ. խմբագրությամբ Սահմանադրությամբ սահմանադիրը չափից մեծ վստահություն է ներդրել Սահմանադրական դատարանի մեջ՝ չկանխատեսելով նաև Սահմանադրական դատարանի կողմից Սահմանադրության ոչ ռացիոնալ մեկնաբանման ռիսկը, կամ բարդացրել է Սահմանադրության կիրառման ընթացակարգը՝ լրացուցիչ խոչընդոտներ ստեղծելով սահմանադրական սուբյեկտիվ իրավունքների պաշտպանության համար: Այդուհանդերձ, գտնույմ ենք, որ սեփական հայեցողությամբ օրենքի սահմանադրականությունը գնահատելու արդյունքում օրենքը մի կողմ դնելու ու Սահմանադրությունն անմիջական կիրառելու հնարավորությունը լի է ավելի մեծ վտանգներով՝ առաջ բերելով դատարանների և վարչական մարմինների կողմից նույնական իրավիճակներում օրենքի նորմերի տարաբնույթ մեկնաբանման, օրենքի առջև հավասարության սկզբունքի խախտման ռիսկեր: Ավելին, եթե երկրում առկա լինի լեգիտիմության այնպիսի պակաս, որը ներթափանցի անգամ սահմանադրական արդարադատության ոլորտ, ապա այս պարագայում դժվար է պատկերացնել, և խիստ տեսական է այն իրավիճակը, որ հիերարխիկ կաշկանդվածություն ունեցող վարչական մարմինը գործնականում շահագրգռված կլինի անմիջականորեն կիրառել Սահմանադրությունը՝ հաղթահարելով օրենքի հակասահմանադրական կարգավորումը:

Եզրահանգումներ

Այսպիսով, վերլուծելով սահմանադրական նորմերի անմիջական գործողության և կիրառման այլ երկրների փորձը և դրանք համադրելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության կարգավորումների հետ՝ կարող ենք հանգել հետևյալ եզրակացությունների.

- ամբողջ Սահմանադրության անմիջական գործողության իրավական ամրագրումը խորթ է արևմտաեվրոպական սահմանադրական իրավունքին: Նման ճանապարհով են գնացել միայն հետխորհրդային և հետսոցիալիստական որոշ երկրներ՝ որպես Սահմանադրության նորմատիվ-իրավաբանական ուժը ընդգծելուն, սահմանադրական նորմերի չկիրառման սոցիալիզմի ավանդույթների հաղթահարմանն ուղղված քայլ:

- Սահմանադրության «անմիջական գործողություն» եզրույթը իմաստալից է կիրառել բացառապես հիմնական իրավունքների նկատմամբ: Հիմնական իրավունքներից զատ, Սահմանադրության մյուս նորմերի պարագայում «անմիջական գործողությունը» ոչ այլ ինչ է, քան ցանկացած իրավական նորմի նորմատիվությանը բնորոշ սովորական գործողություն:

- Սահմանադրությունը, անփոփոխելի 3-րդ հոդվածում ամրագրելով հիմնական իրավունքների անմիջական գործողության նորմը, դրանով իսկ հիմնական իրավունքները սահմանադրական մակարդակով երաշխավորել է որպես *սուբյեկտիվ հանրային իրավունքներ*:

- Իրավական նորմերի իրավաբանական ուժի աստիճանակարգությունը պետք է տարբերակել *իրավական նորմերի կիրառման աստիճանակարգությունից*: Վերջինս պահանջում է հակառակ հաջորդականություն՝ առավել ցածր իրավաբանական ուժ ունեցող ակտից դեպի առավել բարձրի կիրառում: Դա բխում է սահմանադրական վերահսկողության կենտրոնացված մոդելից, իշխանությունների բաժանման և օրենսդիր իշխանության ոլորտը հարգելու սկզբունքից, ավելի կոնկրետ և մանրամասն ձևակերպված օրենքի պարտադիրությունից, իրավական որոշակիությունը ապահովելու, օրենքի հայեցողական կիրառումը բացառելու և դրանով իսկ՝ օրենքի առաջ բոլորի հավասարությունը երաշխավորելու անհրաժեշտությունից:

- Դատարանները և վարչական մարմինները կարող են և պարտավոր են ուղղակիորեն կիրառել Սահմանադրությունը այն դեպքում, երբ չկա օրենքի համապատասխան կարգավորում, կամ այն բացեր ունի:

НЕПОСРЕДСТВЕННОЕ ДЕЙСТВИЕ КОНСТИТУЦИИ И ПРИМЕНЕНИЕ ПРАВОВЫХ НОРМ В КОНТЕКСТЕ ВЕРХОВЕНСТВА КОНСТИТУЦИИ

Вардан Погосян

Член Специальной комиссии по конституционным реформам 2013–2015 гг.

Нора Саргсян

*Доцент кафедры европейского и международного права ЕГУ,
кандидат юридических наук*

Конституция Республики Армения, как в редакции 1995 года (статья 6, часть 2), так и в редакции 2005 года (статья 6, часть 1) предусматривала, что Основной закон имеет высшую юридическую силу и ее нормы применяются непосредственно. В то же время Конституции в редакции 2005 года предусматривала, что государство ограничено основными правами человека и гражданина как непосредственно действующим правом (статья 3, часть 3). Статья 5 Конституции в редакции 2015 г. устранила общее положение о прямом действии всей Конституции (часть 1), сохранив его только в отношении основных прав и свобод (статья 3, часть 3).

В статье анализируется происхождение понятия «прямое действие» Конституции, его сущность и необходимость закрепления данного положения в Конституции. Затем разъясняется сущность и необходимость конституционного закрепления прямого действия основных прав, после чего обсуждается практический вопрос, совпадает ли иерархия правовых норм с иерархией их применения.

THE DIRECT EFFECT OF THE CONSTITUTION AND THE APPLICATION OF LEGAL NORMS IN THE CONTEXT OF THE SUPREMACY OF THE CONSTITUTION

Vardan Poghosyan

Member of the Specialized Commission for Constitutional Reforms of 2013-2015

Nora Sargsyan

*Associate Professor at the YSU Chair of European and International Law,
Candidate of Legal Sciences*

The Constitution of the Republic of Armenia both in the version of 1995 (Article 6, part 2), as well as in the version of 2005 (Article 6, part 1) provided that the Constitution had a supreme legal force and its norms apply directly. At the same time, the Constitution in the version of 2005 stipulated that the state was restricted by the fundamental human rights as the directly applicable law (Article 3, part 3). Article 5 of the Constitution in the version of 2015 has eliminated the general provision on the direct effect of the whole Constitution (part 1), maintaining it only with respect to fundamental rights and freedoms (Article 3, part 3).

This article analyzes the origin of the concept of "direct effect" of the Constitution, its essence and the need for its pronouncement in the constitution (I). Then the essence and necessity of the constitutional declaration of direct effect of fundamental rights is explained (II). Afterwards, the practical question whether the hierarchy of legal norms is the same as the hierarchy of their application is discussed (III).

Բանալի բառեր. Սահմանադրություն, հիմնական իրավունքներ, անմիջական գործողություն, իրավական նորմերի գործողության և կիրառման աստիճանակարգություն, Սահմանադրության գերակայություն, բարձրագույն իրավաբանական ուժ, սահմանադրական վերահսկողություն:

Ключевые слова: Конституция, основные права, прямое действие, иерархия применения правовых норм, верховенство Конституции, высшая юридическая сила, конституционный контроль.

Keywords. Constitution, fundamental rights, direct effect, hierarchy of application of legal norms, supremacy of the Constitution, supreme legal force, constitutional control.